ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР

Հասարակական գիտություններ № 4, 1962 Общественные науки

Մ. Գ. Նիկողոսյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՍՈՎԵՏՆԵՐԸ 1917 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍՅԱՆ ԴԵՊՔԵՐԻՑ ՀԵՏՈ

Վերջին տարիներին, մասնավորապես ՍՄԿՊ XX համագումարից հետո ընկած ժամանակաշրջանում, սովետահայ պատմաբանները նկատելի հաջողությունների են հասել Սովետական իշխանության համար Հայաստանի աշխատավորների մղած պայքարի պատմության ուսումնասիրման գործում։ Սակայն, ըստ մեծ մասի, նրանք իրենց հիմնական ուշադրությունը բևեռել են ետհոկտեմբերյան շրջանի վրա, և փետրվարից մինչև հոկտեմբեր ժամանակամիջոցն ընդգրկող իրադարձությունների բովանդակությունը բացահայտված է ոչ-լրիվ չափով։ Ընդ որում, որոշ պրոբլեմներ, օրինակ Սովետների գործունեությունը Հայաստանում 1917 թվականին, դեռևս անբավարար է մշակված։

Հավակնություն չունենալով տալու 1917 թ. Հայաստանի Սովետների գործունեության հետ առնչվող բոլոր հարցերի լուսաբանումը, այս հոդվածում մենք կփորձենք բացահայտել դրանց գործունեության առանձին կողմերը հուլիսյան դեպքերից հետո, մերկացնել մենշևիկների և էսեռների համաձայնողական քաղաքականության էությունը, նրանցից մասսաների հեռանալը և վերջիններիս վրա բոլշևիկների ազդեցության ուժեղացումը։

Ռևոլյուցիայի զարգացման մեջ հուլիսյան դեպքերը շրջադարձային կետ էին։ Հուլիսյան դեպքերի լուրը արագությամբ տարածվեց երկրով մեկ, այդ թվում նաև Հայաստանում։ Հայտնի է, օրինակ, Ալեքսանդրոպոլի բանվորների և զինվորների՝ 1917 թ. հուլիսի 9-ի հինգ հազարանոց միտինգի ընդունած բանաձևը, որտեղ այդ դեպքերը գնահատվում էին իբրև «արդարացի և անհրաժեշտ բողոք» կոալիցիոն կառավարության ներքին ու արտաքին քաղաքականության դեմ և առաջ էին քաշվում ամբողջ իշխանությունը Սովետներին, գաղտնի պայմանագրերի հրապարակման, խաղաղության, արտադրության և բաշխման վրա վերահսկողություն սահմանելու և այլ պահանջներ՝։

Բայց համաձայնողական պարտիաների ղեկավարության տակ գտնվող Անդրկովկասի Սովետները պաշտպանեցին Սովետների Համառուսաստանյան Կենտրոնական Գործադիր Կոմիտեի հակառևոլյուցիոն քայլերը։ Կովկասյան բանակի Երկրային Սովետի Գործադիր Կոմիտեն մշակեց մի շարք միջոցառումներ՝ ռևոլյուցիոն շարժումները ճնշելու համար։ Այսպես, միտինգների հավաքվել կարելի էր միայն զինվորական և կայազորային Գործադիր Կոմիտեների թույլտվությամբ՝ պարապմունքներից ազատ ժամերին, ընդ որում՝ կողմնակի ելույթ ունեցողները անպայմանորեն զինվորական կազմակերպություններից պիտի վկայագիր ներկայացնեին, մարտական պայմաններում ար-

---

[1] *Տես* „Рабочий и солдат", № 28, 1917.

գնվում էին ժողովները և ստրատեգիական ու տակտիկական հրամանների քննարկումները[2]։

Իր հակաժողովրդական գործելակերպում ավելի հեռուն գնաց էրզրում քաղաքի բանակային կոմիտեն։ Պաշտպանելով «ժամանակավոր կառավարության անսահմանափակ իրավունքներ տալու» մասին Սովետների Համառուսաստանյան Գործկոմի որոշումը, նա միացավ «դիրքային զորքերի նկատմամբ» դաժան միջոցների կիրառման[3]։

Բայազետի բանվորների և զինվորների Սովետի Գործադիր Կոմիտեն հուլիսի 10-ին բոլշևիկներին ձերբակալելու և բոլշևիկյան թերթերը փակելու մասին Կերենսկու հեռագիրը ստանալուց հետո «կարգադրեց փոստա-հեռագրական գրասենյակի պետին՝ բռնագրավել բոլշևիկյան գրականությունը և այն բերել Գործադիր Կոմիտե»[4]։

Այսպիսով, էսեռա-մենշևիկյան ղեկավարության հետևանքով՝ Սովետները Անդրկովկասում նույնպես դարձել էին ժամանակավոր կառավարության կցորդը։

Հայաստանի Սովետների էսեռա-մենշևիկյան ղեկավարությունը մի շարք ռեպրեսիաների դիմեց ռեոլյուցիոն մասսաների նկատմամբ։ Հայտնի է, որ 1917 թ. հուլիսի 5-ին առաջին անհրաժեշտության առարկաների գների առասպելական բարձրացման պատճառով Երևանի կայազորի զինվորները հակակառավարական ելույթ են ունենում։ Իրադարձությունները այնպիսի բնույթ են ստանում, որ Երևանի Գործադիր Կոմիտեն բոլորովին հրաժարվում է պատասխանատու լինել քաղաքում ստեղծված վիճակի համար։ Զինվորների դեպուտատների Սովետը, որ կարող էր քաղաքի ամբողջ իշխանությունն իր ձեռքը վերցնել, այն հանձնեց Երևանի կայազորի պետին։ Վերջինս Կովկասյան բանակի Գլխավոր հրամանատարի շտաբի պետին հուլիսի 6-ին ուղարկած հեռագրերում նշում էր, որ տրամադրությունը կայազորում տագնապալից է և որ մի շարք զորամասերի զինվորները, ինչպես այդ երևում է նրա զգուշավոր արտահայտությունից, «հրաժարվել են ցույց տալ օգնություն»[5]։

Վախենալով մասսաների նման տրամադրություններից, Զինվորական դեպուտատների Սովետի Գործադիր Կոմիտեի հակառեոլյուցիոն մեծամասնությունը հուլիսի 6-ին դաղտնի որոշում է ընդունում ռեոլյուցիոն զինվորներին Երևանից հեռացնելու վերաբերյալ։ Երևանի կայազորի պետին հենց նույն օրը քաղաքի Զինվորական դեպուտատների Սովետի Գործկոմի կողմից ուղարկված գրության մեջ ասված էր, որ «Հարվածային բատալիոնի մեջ գրանցված զինվորների հեռացման համար հիմք է ծառայել այն, որ Երևանի կայազորում նրանք եղել են ամենաանհանդիստ և վտանգավոր տարրը, ընդ որում նրանցից շատերը, կոմիտեի անդամների տվյալներով, մասնակցել են հուլիսի 5-ի անկարգություններին։ Երևանում նրանց հետագա մնալը՝ նրանց ձեռքում գնդացիրների, հրացանների... առկայության պայմաններում, սպառնում է այն-

---

[2] Տես ЦГАОР Груз. ССР (Վրաց. ՍՍՌ Պետական կենտրոնական արխիվ), ֆ. 210, ցուց. I, գ. 95, թ. 46։

[3] Տես ЦГВИА (Կենտրոնական պետական ռազմա-պատմական արխիվ), ֆ. 2396, ցուցակ I. գ. I, թ. 64։

[4] ЦГАОР Груз. ССР, ֆ. 30, ցուց. I, թ. 75։

[5] ЦГВИА, ֆ. 1300, ցուց. I, գ. 11, թթ. 118, 128—130։

պիսի աղետներով, որ Գործադիր կոմիտեն հաշվի նստելով դրա հետ, նրանց ուղարկեց Թիֆլիս[6]։

Դրանից անհապաղ օգտվեց ռեակցիոն սպայությունը։ Օգոստոսին տեղի ունեցավ խոշոր միջադեպ զինվորների և սպաների միջև։ Այն ծագեց վերջիններիս կողմից Պետրոգրադի, Մոսկվայի և Երևանի Սովետների հասցեին արտահայտած վիրավորանքի հետևանքով։ Ճիշտ է, Սովետի Գործադիր Կոմիտեն ստիպված եղավ որոշում ընդունել ռեակցիոն սպաների ձերբակալման մասին՝, բայց հատկանշականը այստեղ այն է, որ ռեակցիոն սպայությունը իր հակառևոլյուցիոն նկրտումների համար օգտագործում է հուլիսյան դեպքերից հետո ստեղծված բարենպաստ պայմանները։

Հուլիսյան դեպքերը մասսաների առաջ մերկացրեցին մանրբուրժուական պարտիաների հակառևոլյուցիոն դիմքը. նշանակալից չափով նպաստեցին նրանց՝ աղատվելու համաձայնողական պատրանքներից։ Արագացավ էսեռամենշևիկյան շարքերի երկմիասնական ազդեցության նվազումը և բոլշևիկների ուժեղացման ընթացքը։

Բոլշևիկների ազդեցության աճը նկատելի դարձավ, մասնավորապես, տեղական ինքնավարությունների ընտրությունների ժամանակ, որոնք Հայաստանում տեղի ունեցան 1917 թ. հուլիս—սեպտեմբեր ամիսներին։ Բոլշևիկների համար ընտրությունները ընթանում էին անասելի ծանր պայմաններում, բայց չնայած դրան, բոլշևիկներին հաջողվեց հասնել նկատելի հաջողությունների։ Ալեքսանդրոպոլի բոլշևիկներին, օրինակ, ձայն տվեց 2000 մարդ, նրանք ստացան 10 տեղ, և քաղաքային դումայում գրավեցին երկրորդ տեղը[8]։ Ավելի մեծ հաջողությունների հասան Ալավերդու և Հաղպատի բոլշևիկները, որոնք տեղական ինքնավարության օրգանների ընտրությունների ընթացքում 5 անգամ ավելի ձայն ստացան, քան դաշնակները[9]։

Չնայած դաժան հալածանքներին, բոլշևիկները շարունակում էին մասսաներին նվաճելու աշխատանքը Կովկասյան բանակում։ Հուլիսյան ցույցի գնդակոծումը, մահապատժի վերականգնման մասին Կերենսկու հրամանը, շարային և այլ պարապմունքների վերսկսումը,—այս բոլորը կրդռեցին զինվորական մասսաներին, որոնք ժամանակավոր կառավարության միջոցառումներում տեսնում էին վերադարձ դեպի տապալված ինքնակալության քաղաքականություն։ Այսպես, ժամանակի հաղորդումներից մեկում խոսվում է կոմիտեների գործունեությունը միայն տնտեսականով սահմանափակելու, շարքային և այլ պարապմունքներ մտցնելու և դրանք պարտադիր դարձնելու կապակցությամբ ծագած զինվորների դժգոհության մասին։ «Այդ բոլորը,—ասված է փաստաթղթում,—դիտվում է որպես վերադարձ դեպի հին ժամանակները և հին կարգերը»[10]։

Խիստ դժգոհություն էր առաջացնում էսեռների և մենշևիկների տակտիկան, որոնք նստած զինվորական կոմիտեներում՝ բուրժուազիային ձեռնտու քաղաքականություն էին անցկացնում։ Այսպես, երբ կովկասյան 4-րդ կոր-

---

[6] Նույն տեղում, գ. 16, թ. 85։

[7] Տես „Страж свободы" (Երևան), № 34, 17 августа 1917 г.

[8] Տես „Кавказский рабочий", № 1, 17, 17 августа 1917 г.

[9] Տես նույն տեղում, № 169, 1917 թ. հոկտեմբերի 10-ին։

[10] ЦГВИА, ֆ. 2168, ցուց. 2, գ. 37, թ. 157։

պուսի 2-րդ հրաձգային դիվիզիայի կոմիտեն բանաձև ընդունեց, չնայած ծառայության ծանր պայմաններին՝ «հրաժարվել թիկունքային հանգստից և մնալ ճակատում», զինվորները այդ որոշումը բացասաբար ընդունեցին։ «Նույնիսկ խոսակցություններ սկսվեցին կոմիտեն փոխելու մասին, որը այդպիսի որոշում էր ընդունել,—գրում է սպաներից մեկը Կովկասյան բանակի Հետախուզական բաժին ուղարկած իր գաղտնի հաղորդման մեջ։—Կարելի է համոզված կերպով ասել,—շարունակում է հաղորդման հեղինակը,—որ կոմիտեներն ու նրանց բանաձևերը մեծամասամբ չեն արտահայտում իրենց ներկայացրած զորամասերի տրամադրություններն ու ձգտումները»[11]։

Զինվորական մասսաները սեփական փորձով համոզվում էին, որ խաղաղության մասին մենշևիկների ու էսեռների բոլոր բարբաջանքները լրիվ խաբեություն են, որ նրանց քաղաքականությունը ոչնչով չի տարբերվում բուրժուազիայի քաղաքականությունից։ Դրան զուգընթաց, ռևոլյուցիայի հիմնական հարցերում բոլշևիկների հայացքները լայնորեն տարածվում էին զինվորների շրջանում, մի հանգամանք, որը Սովետների մանրբուրժուական ղեկավարներն անգամ չէին կարող թաքցնել։ Վերոհիշյալ հաղորդագրության հեղինակը մեջ է բերում Կովկասյան 4-րդ բանակային կորպուսի կոմիտեի նախագահի խոստովանությունը այն մասին, որ «բոլշևիկյան պրոպագանդան տեղ է գտել կորպուսի շատ զորամասերում և հատկապես ուժեղ է Կովկասյան 2-րդ հրաձգային դիվիզիայում, որի մի շարք զորամասերում բոլշևիզմը... վտանգավոր չափեր է ընդունել»։ Հաղորդման մեջ նշվում էր նաև Առանձին գնդացրային վաշտի դերը, որը Պետրոգրադից այստեղ էր բերվել Առանձին գնդացրային գնդի կողմից հուլիսյան ցույցի ճնշումից հետո։ Այս վաշտի զինվորները պրոպագանդում էին բոլշևիկյան լոզունգներ և համոզում էին «կոմիտեներում սպաներ չընտրել»[12]։

Բերված փաստերը, այսպիսով, վկայում են մասսաների վրա բոլշևիկների ազդեցության անշեղ աճի մասին։

Երկիշխանության դադարումը չէր նշանակում և չէր էլ կարող նշանակել ավարտն այն պայքարի, որ մղվում էր բուրժուազիայի և պրոլետարիատի միջև՝ Փետրվարյան ռևոլյուցիայի հետ։ Այդ պայքարը դարձյալ շարունակվում էր միայն այն տարբերությամբ, որ փոխվել էին նրա մեթոդներն ու ձևերը։ Ավարտվել էր պայքարի խաղաղ զարգացման շրջանը. բանվոր դասակարգի խնդիրը հանգում էր զինված պայքարի միջոցով իշխանությունը նվաճելուն։ Պրոլետարիատի և բուրժուազիայի միջև պայքարի այս նոր էտապի վկաներն էին ՌՍԴՐ(բ)Պ 6-րդ համագումարը և Մոսկվայի Պետական խորհրդակցությունը։

Հակառևոլյուցիան մոբիլիզացնում է իր ուժերը պրոլետարիատին ջախջախելու և Սովետները ցրելու համար։ Բայց հանձինս կոռնիլովյան դավադրության բուրժուազիայի ձեռնարկած այդ փորձը լիակատար պարտություն կրեց։ Կոռնիլովշչինայի պարտությունը կրկին փոխեց դասակարգային ուժերի փոխհարաբերությունը հօգուտ ռևոլյուցիայի։ Սկսվեց Սովետների բոլշևիկացման շրջանը։ Միաժամանակ ռևոլյուցիոն ալիքի նոր վերելքը ճեղքվածք և տարաձայնություններ էր առաջացնում համաձայնողական պարտիաների լա-

[11] Նույն տեղում, թ. 249։
[12] Նույն տեղում։

գերում։ Մասնավորապես ջրի երես դուրս եկան անդրկովկասյան և ռուսական պաշտպանողականների միջև եղած տարաձայնությունները։ Անդրկովկասյան մենշևիկները մասսաների պաշտպանությունից վերջնականապես չզրկվելու համար, ի տարբերություն Կենտրոնական Ռուսաստանի մենշևիկների՝ հանդես եկան ցենզային տարրերի հետ կոալիցիայի մեջ մտնելու դեմ։ Սովետների Կովկասյան Երկրային Կենտրոնի և Թիֆլիսի Սովետի Գործկոմի համատեղ նիստը 1917 թ. սեպտեմբերի 2-ին ընդունեց բանաձև, որը դատապարտում էր Կոռնիլովի հակառևոլյուցիոն ելույթը և կադետների պարտիան դիտում էր իբրև հակառևոլյուցիայի կողմն անցած պարտիա։ Բանաձևն առաջարկում էր կազմել կառավարություն՝ առանց կադետների և առհասարակ ցենզային տարրերի մասնակցության՝ ամբողջ իշխանությունը դեմոկրատական և սոցիալիստական պարտիաներին տալու պայմանով[13]։

Սա իհարկե մի քող էր, որի տակ թաքնվելով՝ անդրկովկասյան համաձայնողականների լիդերները ձգտում էին մասսաների աչքերին թոզ փչել և ձևանալ ռևոլյուցիայի «պաշտպաններ», ծածկել բուրժուազիայի հետ ունեցած իրենց կապերը։ Այդ բանաձևը իրականում իշխանությունը «դեմոկրատական և սոցիալիստական պարտիաներին» հանձնելու պատրվակով ուղղված էր Սովետների իշխանության հաստատման դեմ։ Ընդ որում մենշևիկների և էսեռների կողմից կոալիցիայի դեմ հայտարարված պայքարը կեղծ էր, որովհետև դրանից հետո Անդրկովկասյան Հատուկ կոմիտե վերակազմելու մասին նրանց ընդունած որոշման իրագործումը կախված էր Ժամանակավոր կառավարության սանկցիայից, մի կառավարություն, որ կազմվել էր ճիշտ այն սկզբունքներով, որի դեմ խոսքով ելույթ էին ունենում անդրկովկասյան Սովետների ղեկավարները։

Առանց բուրժուազիայի մասնակցության ռևոլյուցիոն իշխանության ստեղծման օգտին ելույթ էին ունենում բոլշևիկները, քանի որ նման իշխանությունը տվյալ էտապում նշանակում էր կոալիցիայի քայքայում։ Բոլշևիկների դիրքորոշումը, սակայն, բոլորովին տարբերվում էր էսեռա-մենշևիկյանից։ Եթե վերջիններս ձգտում էին Կոռնիլովյան խռովությունը ներկայացնել որպես ելույթ Ժամանակավոր կառավարության դեմ, ապա բոլշևիկները հակառևոլյուցիոն այդ խռովության դեմ մասսաների համախմբումը զուգակցում էին Ժամանակավոր կառավարության մերկացման հետ։ Բոլշևիկները մասսաներին բացատրում էին, որ զեներալական այդ խռովության արմատները թաքնված են մանրբուրժուական պարտիաների համաձայնողական քաղաքականության և Կերենսկու կառավարությանը ցույց տված աջակցության մեջ։ Կանգնելով ռևոլյուցիոն գործողությունների դիրքերում, բոլշևիկները մասսաներին կոալիցիայի դեմ հետևողական պայքարի կոչ էին անում։

Ստանալով զեներալական խռովության լուրը, Հայաստանի Սովետները դատապարտեցին կոռնիլովշչինան։ Սովետներում անհաշտ պայքար ծավալվեց մի կողմից բոլշևիկների, իսկ մյուս կողմից էսեռների ու մենշևիկների միջև։ Օգոստոսի 29-ին Կարսում տեղակայված 280-րդ հետևակային գնդի կոմիտեի նիստում, ուր քննվում էին Կոռնիլովի խռովության մասին հաղորդումը և այդ առթիվ Կարսի Սովետի կողմից ընդունված միջոցառումները, ելույթ ունեցավ նաև բոլշևիկ, պրապորշչիկ Հովհաննիսյանցը։ Նա ուղղակի հայտարարեց. «Ընդ-

[13] Տես С. Сеф. „Революция 1917 г. в Закавказье", Тифлис. 1917 г., էջ 214։

կերներ, ճիշտ է ռևոլյուցիայից հետո տեղի է ունենում հակառևոլյուցիա, բայց այդ հակառևոլյուցիան կարելի է թույլ չտալ, եթե հենց սկզբից ձեռնարկվեն ամենախիստ միջոցներ։ ...Ժամանակավոր կառավարությունը չի ձեռնարկել այդպիսի միջոցառումներ և թույլ է տվել հակառևոլյուցիայի ելույթ, դրանումն է... Ժամանակավոր կառավարության մեղքը, և մենք այդ պետք է ասենք։ Քանի դեռ այդ կառավարության մեջ նստած են բուրժուաներ, մենք չպետք է պաշտպանենք նրան։ ...Ընկերներ, մեր բոլշևիկներն ասում են՝ ամբողջ իշխանությունը հանձնել Սովետներին, և դա ճիշտ է։ Այստեղ համոզում են հավատալ սպաներին. նրանք բոլորը հակառևոլյուցիոներներ են»[14]։

Սովետների մանրբուրժուական մեծամասնությունը, որն ստիպված էր հանդես դալ «դեմոկրատական և սոցիալիստական պարտիաների ներկայացուցիչներից միասեռ կառավարություն կազմելու լոզունգով», մասսաների ճնշման տակ չէր կարող չհամաձայնվել հակառևոլյուցիայի դեմ պայքար մղելու նպատակով ռևոլյուցիոն կոմիտեների ստեղծմանը։ Այդ կոմիտեների առջև ծառացած հիմնական խնդիրը կոռնիլովական տարրերի կողմից հակառևոլյուցիոն ելույթներ ունենալու հնարավորության խափանումն էր։ Այդ նպատակով էլ ռևոլյուցիոն կոմիտեները իրականացրին մի շարք միջոցառումներ։ Այսպես, Ռևոլյուցիայի պաշտպանության արտակարգ հանձնաժողովը, որ օգոստոսի 29-ին կազմակերպվել էր Ալեքսանդրոպոլում, «երեք ժամվա ընթացքում քաղաքում և գավառում ամբողջ իշխանությունը վերցրեց իր ձեռքը և հակառևոլյուցիոն ելույթների հնարավորությունը բացառող անհրաժեշտ միջոցառումներ ձեռնարկեց»[15]։ Արտակարգ այդ հանձնաժողովը Ալեքսանդրոպոլի բոլոր հիմնարկներում և զինվորական մասերում նշանակեց կոմիսարներ։ «Առանց կոմիսարների գիտության և համաձայնության,—ասված է Արտակարգ Հանձնաժողովի օգոստոսի 29-ին ընդունած որոշման մեջ,—չեն կարող լուծվել զինվորական մասերի ինչպես քաղաքական բնույթի, այնպես էլ այլ հարցեր, որոնք կարող են օգտագործվել քաղաքական նպատակներով։ Կոմիսարներին հանձնարարվում է զինվորական մասերի ամբողջ կյանքի վերահսկողությունը»[16]։

Օգոստոսի 29-ին Զինվորական դեպուտատների Երևանի Սովետի Գործկոմը որոշեց կազմակերպել հակառևոլյուցիայի դեմ պայքարող ռևոլյուցիոն շտաբ, նշանակեց Երևանի կայազորի կոմիսարին և վճռեց «հայտնել կայազորի պետին, որպեսզի ոչ մի կարգադրություն և հրաման առանց կոմիսարի գիտության չտրվի»[17]։ Գործկոմը կոմիսարներ նշանակեց միլիցիայում, փոստ-հեռագրատանը, սահմանելով բոլոր ուղարկվող և ստացվող հեռագրերի ստուգում, իսկ օգոստոսի 31-ին՝ կոմիսարներ ընտրեց Երևան և Ալեքսանդրի երկաթուղային կայարանների համար[18]։

Ռևոլյուցիոն կոմիտեներ կազմակերպվեցին նաև Հայաստանի շատ այլ քաղաքներում։

Բոլշևիկները աչքի ընկնող դեր կատարեցին հակառևոլյուցիայի դեմ մղված պայքարում։ Բոլշևիկ Ս. Հովսեփյանը Կովկասի բոլշևիկյան կազմակեր-

[14] ЦГАОР Груз. ССР, ֆ. 21с, ցուց. 2, գ. 6, թ. 120։
[15] Նույն տեղում, գ. 128, թ. 24։
[16] „Рабочий и солдат", № 41. 1917 թ., 31-ն օգոստոսի։
[17] ЦГАОР Груз. ССР, ֆ. 21, ցուց. 2, գ. 117, թ. 54.
[18] Նույն տեղում, տես նաև „Страж свободы", № 39, 3 սեպտեմբերի 1917 թ.։

պությունների երկրային առաջին համագումարում, խոսելով կոռնիլովշչինայի ժամանակ մասսաների տրամադրությունների մասին, ասաց. «Կոռնիլովյան օրերը փոխեցին զինվորների տրամադրությունները հօգուտ մեզ։ Նույնիսկ էսեռների պաշտոնական առաջնորդները դիմեցին մեր օգնությանը, և կոմիսարների պատասխանատու պաշտոններին նշանակվեցին մեր ընկերները։ Մասսաները ետ քաշվեցին էսեռներից։ Մեր կազմակերպություններին դիմեցին զինվորական մասսաները»[19]։

Հայաստանի Սովետները, Կովկասի Սովետների Երկրային Կենտրոնի որոշումից հետո, սկզբում հրաժարվեցին ենթարկվել ռևոլյուցիոն կոմիտեները ցրելու մասին Կերենսկու հրամանին, կոմիտեներ, որոնք առաջացել էին կոռնիլովշչինայի դեմ մղած պայքարի շրջանում։ Այդ առումով ուշագրավ է Սովետների Համառուսաստանյան Կենտգործկոմի հասցեին Սարիղամիշի Սովետի նախագահի՝ սեպտեմբերի 9-ին ուղարկած հեռագիրը, որտեղ ասված էր.

«Սարիղամիշի շրջանի զինվորների և բանվորների դեպուտատների Սովետի Գործադիր Կոմիտեն միաձայն պահանջում է իշխանության կազմակերպում միայն դեմոկրատական տարրերից՝ բանվորների, գյուղացիների և զինվորների ներկայացուցիչներից, կատեգորիկ կերպով մերժելով ամեն մի կոալիցիա բուրժուազիայի հետ։ Դրա հետ մեկտեղ Գործադիր Կոմիտեն պահանջում է բոլոր կոմիտեների պահպանումը, որ առաջ են եկել կոռնիլովշչինայի դեմ մղված պայքարի ընթացքում»[20]։ Սեպտեմբերի 5-ին ռևոլյուցիայի պաշտպանության Ալեքսանդրոպոլի Արտակարգ հանձնաժողովը բանաձև ընդունեց այն մասին, որ «Կերենսկու հրամանը չի համապատասխանում ռևոլյուցիոն դեմոկրատիայի շահերին» և որ «Արտակարգ հանձնաժողովը շարունակում է աշխատել և օգտվել լիակատար իշխանությունից»[21]։ Բայց նման դիրքորոշումը ոչ թե սկզբունքային նկատառումների, այլ զուտ հաշվենկատության արդյունք էր և թելադրվում էր մասսաների ձախացման ընթացքը կանգնեցնելու ձգտումով։ Էսեռների ու մենշևիկների հակաշխատավորական նմանօրինակ դիրքորոշումը բացեիբաց երևում է, օրինակ, 1917 թ. սեպտեմբերի 12-ին Կարսի Բանվորների և Զինվորների Դեպուտատների Սովետի նիստում մանրբուրժուական պարտիաների ներկայացուցիչների ելույթներից։ Սովետի մանրբուրժուական ղեկավարների ելույթները խոսում էին նրանց լագերում տիրող խառնաշփոթության և խճճվածության մասին։ Խոսքեր շռայլելով իշխանությունը դեմոկրատական և սոցիալիստական պարտիաներին հանձնելու, բուրժուազիայի հակառևոլյուցիոնության մասին, նրանք դրա հետ միասին փորձում էին արդարացնել կոալիցիայի քաղաքականությունը, դասակարգային աճող հակասությունների սվաղման քաղաքականությունը։ Նիստի ընդունած բանաձևում մի կողմից խոսվում էր այն մասին, որ «պետական ամբողջ իշխանությունը պետք է տրվի դեմոկրատական և սոցիալիստական պարտիաներին», իսկ մյուս կողմից, մատնանշվում էր, թե՝ «մինչև Սահմանադիր ժողովի գումարվելը միացյալ նիստը խնդրում է ռևոլյուցիոն դեմոկրատական կազմակերպությունների ներկայացուցիչների համագումարից սեպտեմբերի 12-ին իրեն հայտա-

---

[19] „Кавказский рабочий", № 169, 10-ն հոկտեմբերի 1917 թ.։

[20] ЦГАОР СССР (ՍՍՌՄ Հոկտեմբերյան ռևոլյուցիայի Կենտրոնական Պետական պատմական արխիվ), ֆ. 6978, ցուց. 1, գ. 399, թ. 20։

[21] „Рабочий и солдат", № 43, 8-ն սեպտեմբերի 1917 թ.։

բարել ռևոլյուցիոն դեմոկրատիայի լիազոր օրգանը, երկրի կառավարման գործում նրա գերագույն ղեկավարը»[22]։ Այսպիսով, դեմոկրատական խորհրդակցությանը, որի կազմում լայնորեն ընդգրկվել էին բուրժուական քաղաքային դումայի և ցենզային ինքնավարությունների ներկայացուցիչները, առաջարկվում էր ամբողջ իշխանությունը վերցնել իր ձեռքը, մի հանգամանք, որ ըստ էության նշանակում էր կոալիցիայի գաղափարի գաղտագողի իրականացում։

Լինելով կոալիցիայի դեմ հետևողական պայքարողներ, բոլշևիկները ընդգծում էին իրենց քաղաքականության ճշմարտացիությունը, նրա համապատասխանելը մասսաների շահերին. նրանք ցույց էին տալիս, որ հակառևոլյուցիայի վերջնական կասեցման և ռևոլյուցիայի հաղթանակի համար անհրաժեշտ է անհողդողդ կերպով կանգնել վճռական ու անհապաղ պայքարի ուղու վրա՝ բուրժուազիային իշխանությունից հեռացնելու համար։ «Մենք նախատեսում էինք,—ասում էր նշված նիստի ժամանակ Կարսի Սովետի բոլշևիկյան ֆրակցիայի անդամ Ամֆիմիադին,—որ Կոռնիլովներն ու Կալեդիններր երևան կգան, և եթե նրանք հաղթեին, ապա մեզ կմեղադրեին, չնայած նրան, որ մենք կանգնած էինք ռևոլյուցիայի կողմը։ Այդ ելույթներից հետո մենք պետք է վճռաբար հայտարարենք բուրժուազիային՝ «ձեռքերդ հեռու իշխանությունից»[23]։

Դեպքերի հետագա ընթացքը լրիվ կերպով ցույց տվեց, որ ռևոլյուցիոն այն ֆրազները, որոնցով ձեռնածություն էին անում էսեռներն ու մենշևիկները, հետապնդում էին մասսաներին խաբելու ստոր նպատակներ։ Բանվորական շարժման հետագա ուժեղացումը, գյուղացիական և զինվորական մասսաների ելույթները, աշխատավորների վրա բոլշևիկյան դաղափարների ազդեցության հուժկու աճը,—այս ամենը մանրբուրժուական դեմոկրատիային մղեց դեպի մասնավոր սեփականատիրական բոլոր ուժերի համախմբում։ 1917 թ. հոկտեմբերի 20-ին Սովետների Երկրային Կենտրոնի և Թիֆլիսի Սովետի Գործադիր Կոմիտեի միացյալ նիստը հրաժարվեց սեպտեմբերի 2-ի բանաձևով ձևակերպված նախկին դիրքորոշումից և որոշեց վերակազմել Անդրկովկասյան Հատուկ կոմիտե՝ «սոցիալիստական», դեմոկրատական և բուրժուա-նացիոնալիստական պարտիաների ներկայացուցչությամբ, իսկ Կովկասյան ռևոլյուցիոն Կոմիտեն, որ ստեղծվել էր հակառևոլյուցիայի դեմ պայքարելու համար, միացնել Հատուկ Կոմիտեին կից անարխիայի դեմ պայքարելու նպատակով կազմակերպվող հանձնաժողովին[24]։ Այսպես էր մանրբուրժուական դեմոկրատիան հրաժարվում նույնիսկ իր ձևական հայտարարություններից և կրկին նահանջում ազգային բուրժուազիայի հետ դաշինք կնքելու, հակաբոլշևիկյան բոլոր ուժերին միավորելու հակառևոլյուցիոն ուղին։

Բայց բոլշևիկների վճռական և հետևողական տակտիկան, կոռնիլովշչինայի դեմ մղված պայքարում նրանց ղեկավար դերը ավելի բարձրացրին պարտիայի հեղինակությունը ժողովրդական լայն զանգվածների մեջ։ Այդ մասին էին պատմում իրենց ելույթներում ՌՍԴԲ(բ)Պ Կովկասյան երկրային

---

[22] „Известия Карсского Совета солдатских, рабочих и крестьянских депутатов и официальный отдел Областного Комиссариата". № 98, 13-ն սեպտեմբերի 1917 թ.։

[23] Նույն տեղում։

[24] Տես С. Сеф. Նշված աշխատությունը, էջ 223—228։

1-ին համագումարի պատգամավորները։ Այսպես օրինակ, Սարիղամիշի բոլշևիկյան կազմակերպության պատգամավոր Կիասովը համագումարում հայտարարեց, որ «կոռնիլովշչինան, խթանելով բոլշևիկների աճը, հույս է տալիս, թե Սովետի վերընտրությունները քիչ տեղեր չեն տա բոլշևիկներին»[25]։

Անդրկովկասում ռևոլյուցիոն իրադարձությունների զարգացման վրա մեծ ազդեցություն թողեց Բաքվի բանվորների հաղթական համընդհանուր գործադուլը։ Կազմակերպությունների մեծամասնությունը և աշխատավոր մասսաները ջերմորեն ողջունեցին Բաքվի պրոլետարիատի հաղթանակը։ ՌՍԴԲ(բ)Պ Կարսի կազմակերպության անդամների և մենշևիկ-ինտերնացիոնալականների ընդհանուր ժողովը հոկտեմբերի 2-ին լսելով Յ. Լավրենտևի զեկուցումը Բաքվի բանվորների գործադուլի մասին, ընդունեց հետևյալ բանաձևը. «Նկատի ունենալով Բաքվի բանվորների տնտեսական ծանր վիճակը և կոլեկտիվ պայմանագրի նրանց արդարացի պահանջը, արտահայտում ենք մեր համակրանքը և ողջունում ենք նրանց կազմակերպված ելույթը»[26]։ Հաղթական այդ գործադուլը ողջունեցին նաև Բաքվի նախկին բանվորները՝ ՌՍԴԲՊ Ելիզավետի խմբի զինվորները[27]։

Բաքվի պրոլետարիատի գործադուլի ազդեցության ներքո ելույթներ ունեցան Ալավերդու, Ալեքսանդրոպոլի, Երևանի և Ղափանի բանվորները։ Միաժամանակ ուժեղացան գյուղացիական-ագրարային շարժումները Էջմիածնի, Նոր Բայազետի, Լոռու և Հայաստանի այլ շրջաններում։

Ռևոլյուցիոն շարժումը լայն ծավալ է ընդունում Կովկասյան բանակում։ «Կոռնիլովի ելույթից հետո,—ասված է բանակի հրամանատարության փաստաթղթերից մեկում,—կարգապահության վերջին նշանները անհետացան, բոլոր աստիճանի զինվորական պետերի հեղինակությունը վերջնականապես ընկավ. սպայական կորպուսի և զինվորների միջև ստեղծվեց անանցանելի մի անդունդ։ Հրամանատարական կազմը վերջնականապես կորցրել է զինվորների վստահությունը»[28]։ Խոր անդունդ է առաջացել ոչ միայն սպաների և զինվորների, այլև վերջիններիս և էսեռների միջև։ Դրան նպաստում էին հենց իրենք՝ էսեռները հակաաշխատավորական իրենց քաղաքականությամբ, հանդես գալով բանակում բուրժուազիայի ազդեցության քարոզիչների դերում. այդ իրականացնելով «պատերազմը շարունակելու» լոզունգով։ Հասկանալի է, որ զինվորական մասսաների շահերին խորթ այդ լոզունգը անխուսափելիորեն պիտի հանգեցներ նրա կողմնակիցների՝ էսեռների չեզոքացմանը և հետևապես՝ բանակում բուրժուազիայի ազդեցության վերացմանը։ Դրա հետ միասին, բոլշևիկյան անխոնջ ագիտացիայի շնորհիվ բանակում օրեցօր աճում էին ոչ միայն հակապատերազմական տրամադրությունները, այլև զինվորների դասակարգային գիտակցությունը, պատերազմող մյուս երկրների բանվորների հետ համերաշխությունը վերականգնելու անհրաժեշտությունը՝ բուրժուազիայի դեմ պայքարելու համար։ Կովկասյան բանակի շտաբի գործերում պահպանվել է Էրզրումի հեռագրական վաշտի զինվորների ռևոլյուցիոն տրամադրություն-

---

[25] „Кавказский рабочий", № 169, 10-ն հոկտեմբերի 1917 թ.։

[26] „Бакинский рабочий", № 63, 8-ն հոկտեմբերի 1917 թ.։ „Известия Карсского Совета", № 116, 8-ն հոկտեմբերի 1917 թ.։

[27] „Бакинский рабочий", № 72, 29-ն հոկտեմբերի 1917 թ.։

[28] ЦГВИА, ф. 2168, ցուց. I, գ. 430, թ. 232։

ների մասին հետևյալ հաղորդումը. «վաշտի տրամադրությունը մասամբ առույգ է, մասամբ որոշակիորեն բոլշևիկյան ուղղության է։ Խաղաղություն Գերմանիայի հետ բուրժուազիայի և դաշնակիցների դեմ պատերազմելու համար։ Հայրենասիրական զգացմունքի լիակատար բացակայություն»[29]։

Իհարկե, դժվար է պնդել, թե նման տրամադրությունը համակել էր Կովկասյան բանակի բոլոր զորամասերը։ Եվ դա թեկուզ այն պատճառով, որ էսեռները տակավին շարունակում էին ղեկավար դիրք գրավել երկրային սովետում և զինվորական կոմիտեներում։ Այնուամենայնիվ, վերոհիշյալ փաստաթուղթը ցույց է տալիս այն ուղղությունը, որով ընթանում էր զինվորական մասսաների գիտակցության զարգացումը։ Եվ իզուր չէ, որ Կովկասյան բանակի հրամանատարությունը անհանգստություն էր հայտնում Սարիղամիշում, Կարսում, Ալեքսանդրոպոլում, Երևանում, Ալաշկերտում և Իգդիրում տեղակայված զինվորական մասերում բոլշևիկների աճող ազդեցության առթիվ[30]։

Բուրժուազիայի դեմ մասսաների կազմակերպման և համախմբման գործում մեծ դեր խաղաց Կովկասի բոլշևիկյան կազմակերպությունների առաջին համագումարը, որը տեղի ունեցավ Թիֆլիսում 1917 թ. հոկտեմբերի 2—7-ը։ Միավորելով երկրամասի բոլշևիկյան կազմակերպությունները և ելնելով ՌՍԴԲ(բ)Պ 6-րդ համագումարի որոշումներից, համագումարը բանվորներին ու գյուղացիներին կոչ արեց համարձակ կերպով ընթանալ դեպի իշխանության գրավումը։ Երկրային համագումարների բոլոր որոշումները թափանցված էին սոցիալիստական ռևոլյուցիայի իրականացման անհրաժեշտության գաղափարով, որովհետև առանց այդ ռևոլյուցիայի անհնարին էր լուծել մասսաների շահերին համապատասխանող սոցիալ-տնտեսական ու քաղաքական խնդիրները։ Ընթացիկ մոմենտի մասին ընդունված բանաձևը ռևոլյուցիայի հերթական խնդիրն էր համարում Բանվորների, զինվորների և գյուղացիների դեպուտատների Սովետների Համառուսաստանյան համագումարի հրավիրումը, համագումար, որն իր ձեռքը պետք է վերցներ պետական իշխանությունը։ Մինչև Սովետների Համառուսաստանյան համագումարի հրավիրելը, բանաձևը բոլշևիկներին կոչ էր անում «գործադրել բոլոր ջանքերը տեղերում Սովետների ամրապնդման, որտեղ այդ անհրաժեշտ է նրանց կազմի թարմացման և նրանց իշխանության հնարավոր լայնացման համար»[31]։

Հոկտեմբերի 12-ին ՌՍԴԲ(բ)Պ Կովկասյան Երկրային Կոմիտեն դիմեց պարտիական բոլոր կազմակերպություններին և Սովետներում աշխատող բոլշևիկներին՝ կոչ անելով նրանց պահանջելու Կովկասի բոլոր սովետներից, որպեսզի նրանք «անհապաղ անցկացնեն ընտրություններ Պետերբուրգում հոկտեմբերի 29-ին կայանալիք համագումարի համար»[32]։ Մինչ այդ հոկտեմբերի 11-ին «Кавказский рабочий» թերթը հանդես եկավ «Նախապաղամենտ. Սովետների համագումար և Սահմանադիր ժողով» վերտառությամբ հոդվածով։ Հոդվածը մերկացնում էր էսեռ-մենշևիկյան բլոկի հակառևոլյուցիոն մեքենայությունները, բլոկ, որը բուրժուազիայի հետ դաշնակցած՝ դեմոկրատա-

[29] Նույն տեղում, գ. 453, թ. 96։

[30] Г. Б. Гарибджанян „Коммунистические организации Армении в борьбе за победу Советской власти", Ереван, 1957, էջ 83։

[31] „Резолюция Кавказского краевого с'езда РСДРП(б). Тифлис, 1917, էջ 4։

[32] „Кавказский рабочий", № 172, 12-ն հոկտեմբերի 1917 թ.։

կան խորհրդակցության գումարմամբ և նախապառլամենտի ստեղծմամբ, ինչպես նաև Սովետների Համառուսաստանյան II համագումարի բոյկոտով նրպատակ ուներ ոչնչացնել Սովետները։

Հոդվածն ավարտվում էր հակահեղափոխական բուրժուազիայի դիկտատուրան տապալելու և ամբողջ իշխանությունը Սովետներին հանձնելու կոչով։

Մասսաները չճանաչեցին Սովետների համագումարը բոյկոտելու վերաբերյալ Երկրային Սովետի որոշումը, դատապարտեցին այն և, ընդհակառակը, պաշտպանեցին Սովետների Համառուսաստանյան II համագումար հրավիրելու մասին բոլշևիկյան կոչերը։ Հոկտեմբերի 17-ին Կովկասյան 6-րդ հրաձգային դիվիզիայի դիվիզիական կոմիտեն, լսելով զեկուցում Սովետների համագումարի հրավիրման մասին, ընդունեց հետևյալ բանաձևը. «Կովկասյան 6-րդ հրաձգային դիվիզիայի դիվիզիական կոմիտեն Սովետների համառուսաստանյան համագումարին մասնակցելուց հրաժարվելու մասին Երկրային Սովետի պատճառաբանությունը համարում է անբավարար հիմնավորված և ամենավճռական ձևով բողոքում է այդպիսի որոշման դեմ, գտնելով՝ 1) որ Երկրային Սովետի այդ որոշումը հակառակ է գնում համագումարը հրավիրող Բանվորների և զինվորների Սովետների ԿԳԿ-ի որոշմանը, և դրանով իսկ անկազմակերպվածություն ու պառակտում է մտցնում դեմոկրատիայի շարքերում, 2) որ միայն Սովետների համառուսաստանյան համագումարն է ի վիճակի երկիրը հանել փակուղուց, որի մեջ նրան քշել է կոալիցիոն կառավարությունը, ստեղծել միասնա դեմոկրատական կառավարություն և առաջ քաշել խաղաղության հարցը։ Սովետների որոշումը ճանաչելով որպես միակ ճիշտը, Կովկասյան 6-րդ հրաձգային դիվիզիայի դիվիզիական կոմիտեն իրեն իրավունք է վերապահում իր ներկայացուցիչը ուղարկել Սովետների համառուսաս(տանյան) համագումար»[33]։

Անդրկովկասում Սովետական իշխանության համար մղված պայքարի առաջին շարքերում ընթանում էր պրոլետարական Բաքուն։ Հոկտեմբերի 13-ին, էսեռա-մենշևիկյան Գործկոմի հրաժարականից հետո, ընտրվեց ժամանակավոր Գործադիր կոմիտե՝ Ս. Գ. Շահումյանի գլխավորությամբ։ Հոկտեմբերի 15-ին Բաքվի Սովետը արտահայտվեց իշխանությունը Սովետներին հանձնելու օգտին։

Հոկտեմբերի 18-ին հրաժարական տվեց Ալեքսանդրոպոլի Գործկոմի նախագահությունը։ Հենվելով մասսաների կամքի վրա, բոլշևիկներն առաջարկեցին անցկացնել Սովետի վերընտրություններ։ Բայց գործկոմում դեռևս մեծամասնություն կազմող էսեռներն ու մենշևիկները չլուծեցին բոլշևիկների բարձրացրած այդ հարցը։ Սակայն հաջորդ օրը, Սովետի նիստում, որին բացի դեպուտատներից մասնակցում էին նաև աշխատավորների ներկայացուցիչները, բոլշևիկները մասսաների պաշտպանությամբ անցկացրին որոշում Սովետի վերընտրության մասին։ Այս փաստը բնականաբար վկայում էր այն մասին, որ քաղաքում սկսվել էր մանրբուրժուական և բուրժուա-նացիոնալիստական պարտիաների մեկուսացման և մասսաների բոլշևիկացման պրոցեսը։

Այդ նույն նիստի ժամանակ Ալեքսանդրոպոլի բոլշևիկները տարան մեկ այլ հաղթանակ ևս։ Նրանք որոշում ընդունեցին Սովետների II համագումարին մասնակցելու մասին և Ալեքսանդրոպոլի բոլշևիկյան կազմակերպության բյուրոյի անդամ, զինվոր Ս. Ա. Կորոստիլենկոյին ընտրեցին համագումարի

[33] Նույն աղբյուրում, № 194։

դելեգատ։ Համագումարում ելույթ ունենալով, Ալեքսանդրոպոլի դելեգատը պաշտպանեց ամբողջ իշխանությունը սովետներին հանձնելու պահանջը։

Հոկտեմբերի 19-ին տեղի ունեցան Ալեքսանդրոպոլի սովետի զինվորական, իսկ 29-ին՝ բանվորական սեկցիաների վերընտրությունները։ Դրանց շնորհիվ բոլշևիկների դիրքերը զգալիորեն ուժեղացան. եթե մինչև վերընտրությունները սովետի 347 դեպուտատից միայն 3-ն էին բոլշևիկներ[34], ապա արդեն նորոգված սովետի միայն Գործադիր կոմիտեում բոլշևիկյան ֆրակցիան կազմված էր 21 անդամից[35], և գրավում էր երկրորդ տեղը՝ էսեռներից հետո։

Անդրկովկասում և Հայաստանում սովետների բոլշևիկացման համեմատաբար դանդաղ ընթացքը պայմանավորված էր մի շարք օբյեկտիվ և սուբյեկտիվ պատճառներով։ Այդ պատճառների թվում առաջին հերթին պետք է հիշատակել երկրամասի սոցիալ-տնտեսական հետամնաց վիճակը, պրոլետարիատի փոքրաթվությունը, ազգային կազմի խայտաբղետությունը, բուրժուանացիոնալիստական պարտիաների դեռևս մինչև վերջը չհաղթահարված ազդեցությունը, բոլշևիկյան կազմակերպությունների համեմատաբար թույլ լինելը։

Չնայած Անդրկովկասում Սովետների բոլշևիկանացման դանդաղ ընթացքին, երկրամասի աշխատավոր բնակչությունը օբյեկտիվորեն կանգնած էր բոլշևիկյան պարտիայի կողմը, որովհետև խաղաղության, ժողովրդին հացով ապահովելու, բանվորական վերահսկողություն սահմանելու, հողը աշխատավոր գյուղացիությանը հանձնելու բոլշևիկյան ծրագիրը կրում էր համաժողովրդական բնույթ և համապատասխանում բնակչության հսկայական մեծամասնության կենսական շահերին ու ձգտումներին։ Այդ առումով ուշագրավ է Թավրիզի կայազորի գյուղացիական դեպուտատների սեկցիայի կողմից 1917 թ. հոկտեմբերի 20-ին ընդունված բանաձևը։ Այնտեղ ասված էր «Խնդրել զինվորների, գյուղացիների և բանվորների Սովետների Պետրոգրադի Համառուսաստանյան Կենտրոնական Գործադիր Կոմիտեին ամբողջ հողը, այն է՝ եկեղեցական, պետական (կաբինետային), վանքապատկան, իշխանական, կալվածատիրական և մանրսեփականատիրականը ամբողջ գույքով հանձնելու հողային կոմիտեների տնօրինությանը։ Պատերազմի անհապաղ դադարեցում և իշխանության անցումը զինվորների, գյուղացիների, բանվորների և կազակների սովետների ձեռքը»[36]։ Բանաձևում չկա սովետների կազմը փոխելու պահանջը։ Բայց արտահայտվելով ամբողջ իշխանությունը սովետներին հանձնելու, կալվածատիրական հողատիրությունը վերացնելու և խաղաղություն կնքելու օգտին, բանաձևը դրանով վկայում է բազմակողմանի այն պաշտպանության մասին, որ ամենուր գտնում էին բոլշևիկյան լոզունգները ժողովրդական լայն զանգվածների շրջանում։

Ահա թե ինչու, երբ 1917 թ. Ռուսաստանում ճգնաժամը հասունացել էր և բոլշևիկների ետևից գնում էր ժողովրդի մեծամասնությունը, Հայաստանի Սովետներում տակավին տիրապետող դիրք բռնած էսեռների ու մենշևիկների տակտիկայում նկատելի են դառնում որոշ փոփոխություններ, որոնք բոլորովին չէին արտահայտվում նրանց պրակտիկ գործերում և ինչպես արդեն աս-

[34] Տես „Второй Всероссийский с'езд Советов Р. и С. Д.", Москва, 1937, էջ 231։
[35] Տես „Рабочий и солдат", № 54, 26-ն հոկտեմբերի 1917 թ.։
[36] ЦГАОР СССР, ֆ. 1235, ցուց. 80, գ. 4, թ. 6։

վեց՝ հետապնդում էին մասսաներին խաբելու, նրանց բոլշևիկացումը արգելակելու որոշակի նպատակներ։

1917 թ. հոկտեմբերի 15-ին Երևանի Սովետի օրգան «Страж свободы» թերթում տպագրվեց «Լավ է ուշ, քան երբեք» հատկանշական վերնագիրը կրող հոդվածը։ Սրա հեղինակը մատնանշում էր, թե «բոլոր ռևոլյուցիաների վիրաձը ցույց է տալիս, որ եթե ժողովրդի արյունով նվաճված նոր կարգը չի բարելավում աշխատավորների դրությունը, նրանց չի տալիս այն ամենը, որի համար նրանք պայքարել են, ապա ռևոլյուցիան կործանվում է։ Խաբված ժողովուրդը չի ցանկանում դիմադիր կանգնել հակառևոլյուցիայի դրոհին... դրա համար էլ ժողովրդի գիտակցության մեջ նվաճված աղատությունը պաշտպանելու անհրաժեշտության ամրապնդման համար պետք է արմատապես փոխել աշխատավոր զանգվածների դրությունը և անհապաղ բարելավել նրանց կյանքը։ Հենց այժմ հարկավոր է անել ամեն ինչ, որպեսզի ոչ թե խոսքով, այլ գործով, հօգուտ ժողովրդի, լուծվեն երկրի տնտեսական հարցերը, և առաջիններից մեկը պետք է լուծվի հողային հարցը, այլապես ջարդերի ալիքը կընդգրկի ամբողջ երկիրը»։

Այսպիսով, նույնիսկ սովետների մանրբուրժուական ղեկավարները, որոնք մինչ այդ անընդհատ պնդում էին, թե միայն Սահմանադիր ժողովն է ի վիճակի լուծելու ռևոլյուցիայի հիմնական հարցերը, նույնիսկ սրանք մասսաների ռևոլյուցիոն շարժման ճնշման տակ ստիպված էին խոսքեր շռայլել աշխատավորների օգտին, ընդ որում այն նպատակով, որպեսզի կալվածատերին ու բուրժուազիային պաշտպանեն «ջարդերի ալիքից»։

Մասսաներին խաբելու նույն ստոր նպատակն էր հետապնդում Կովկասյան բանակի բանակային կոմիտեի հոկտեմբերի 21-ի բանաձևը, որը դեմ էր իշխանությունը սովետներին հանձնելուն և պահանջում էր «թիկունքում վերջ տալ անարխիային»։ Բայց, նույնիսկ այդ բանաձևը պահանջում էր անհապաղ խաղաղություն կնքել և «մինչև Սահմանադիր ժողովի կողմից հարցի լուծումը» և «հասարակական կազմակերպությունների» կողմից արդյունաբերության վրա վերահսկողություն սահմանելը բոլոր հողերը հանձնել հողային կոմիտեներին[37]։

Էսեռների և մենշևիկների՝ իրենց դիրքերից հրաժարվելը անպայման նշանակում էր նրանց նախկին քաղաքականության կրախ։ Եվ որպեսզի մասսաների վրա այսպես թե այնպես պահպանեն իրենց ազդեցությունը, նրանք ձևականորեն դիմում էին այն լոզունգներին, որոնք առաջ էին քաշել բոլշևիկները՝ որպես աշխատավոր ժողովրդի կենսական շահերից բխող պահանջներ։

Բայց համաձայնողականների այդ մեքենայությունները նույնպես անհաջողության էին դատապարտված, որովհետև բանվորների և գինվորների սոցիալ-տնտեսական պահանջների կենսագործումը անհնար էր առանց պետական իշխանության դասակարգային բովանդակությունը արմատապես փոխելու, առանց այդ իշխանությունը պրոլետարիատին՝ այդ պահանջները իրագործելու միակ ընդունակ դասակարգին հանձնելու։ Դրանում էր արմատավորված մանրբուրժուական և բուրժուա-նացիոնալիստական պարտիաների քաղաքականության կրախի և բոլշևիզմի վերջնական հաղթանակի օբյեկտիվ պատճառը։

---

[37] Տես ЦГАОР Груз. ССР, ֆ. 21с, ցուց. 2, գ. 79, թթ. 409—416։

Պատմության զարգացման ընթացքը ամենամոտ ժամանակում անհերքելի կերպով հաստատեց այն ճշմարտությունը, որ Սովետները իրոք աշխատավոր զանգվածների ռևոլյուցիոն կամքի ու ձգտումների արտահայտիչն են։ Հոկտեմբերյան Սոցիալիստական Մեծ ռևոլյուցիան բոլշևիկյան գաղափարների հաղթանակի և մանր բուրժուական պարտիաների քաղաքականության սնանկացման պրակտիկ մարմնացումն էր։ Այդ բանի վկայությունն էր նաև Սովետական իշխանության հաստատումը Անդրկովկասում, այդ թվում նաև Հայաստանում։